10 Ապրիլին Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան նախագահ Ա. Դուկասեան ընդունեց «Ազատ Արցախ» պաշտօնաթերթին աշխատակազմը: Քննարկման առնցքը հանդիսացաւ պաշտօնաթերթին կարգավիճակը, որուն առիթով լրագրողներ դժգոհութիւն յայտնեցին այն մասին, որ թերթը իրբեք Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան խորհրդարանի եւ կառավարութեան պաշտօնական օրկան, չի կրնար անկողմնակալ տեսակէտ յայտնել պետական կառոյցներու գործունէութեան մասին՝ վախճալով, որ յիշեալ մարմիններուն կողմէ կրնան հայածուրի:

Կիսելով լրագրողներուն մտահոգութիւնը՝ Դուկասեան անհասկնալի եւ անարդիւնաւէտ նկատեց պաշտօնաթերթին ներկայ կարգավիճակը՝ յայտարարելով, որ ինք եւս կողմնակից է քննադատութեան, եթէ այդ մէկը ճշմարիտ է եւ հիմնաւորուած: Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան նախագահը վերջաւորութեան դիտել տուաւ, որ այս հանդիպումը քարոզչական նպատակ չի հետապնդեր՝ մօտիկ ապագայի նախագահական ընտրութիւններու կապուած, եւ գոհունակութիւն յայտնեց, որ գտնուելով ընտրութիւններու նախօրեակին՝ հանրապետութեան քաղաքական կեանքին մէջ կիրքերու աւելորդ բորբոքում չկայ:

### «ԿԱԹՈՂԻԿԸ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆԸ»՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՊՐՈՑՆԵՐՈՒՆ

Վերջերս «Կաթողիկէ օգնութեան ծառայութեան» կողմէ քննարկուեցին տնօրէն Ռիչըրտ Հոֆմանի նախաձեռնութեամբ 7000 տոլար տրամադրուած է վարդենիսի սահմանամերձ Արփունը գիւղի դպրոցին՝ վերանորոգման համար:

Գրասենեակի «Ծնող - դպրոց համագործակցութիւն» ծրագրի շրջագիծին մէջ ֆինանսական աջակցութիւն ստացած են Հայաստանի 5 մարզերու՝ Արագածոտնի, Արարատի, Գեղարքունիքի, Շիրակի եւ Երեւանի 33 միջնակարգ դպրոցներ:

Կազմակերպութիւնը նախատեսած է նաեւ գիւղական վայրերու դպրոցներուն մէջ հիմնել համակարգչային կեդրոններ:

### Ն. Ք. 4-3ՐԴ ՀԱԶԱՐԱՄԵԱԿԻ ՔԱՂԱՔ - ՏԱՃԱՐԻ ՅԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ

Հայաստանի գիտութիւններու ազգային ակադեմիայի Հնագիտութեան եւ ազգագրութեան հիմնարկի հնագիտական արշաւախումբը, ղեկավարութեամբ Փաւէլ Աւետիսեանի, Արագածոտնի մարզին մէջ կատարած պեղումներուն ընթացքին վերջերս յայտնաբերած է աւելի քան 200 հեկտար՝ Ազարակէն մինչեւ Ոսկեհատ գիւղի տարածքը երկրող հնադարեան վայր մը, ուր երեւան եկան պրոնզէ դարու սրբարաններ, բազիլիկներ, բազիլեայ տաճարներ:

Ըստ Փ. Աւետիսեանի, հին շրջանին եւ միջնադարուն այս տարածքը բնակեցուած է, որուն պատճառով գոյացած է բազմաշերտ յուշարձան, որ պիտի պեղուի յաջորդականութեամբ՝ սկզբնական բնակավայրը յայտնաբերելու համար: Յարգ պեղուած են արձանիկներ, մեծ քանակութեամբ խեցեղէն իրեր, աշխատանքային գործիքներ, պրոնզէ առարկաներ, Օբթախանոս Օգոստոսի պատկերով մետաղէ դրամ: Ներկայիս պեղումներու տուեալները շատ սահմանափակ են, անհրաժեշտ է տարիներու աշխատանք՝ բացայայտելու եւ հետազօտելու համար այդ բոլորը:

Խօսելով հնաւանդ քաղաք-տաճարի պատմամշակութային արժէքին մասին՝ պեղումներու ղեկավարը դիտել տուաւ, որ Ն.Ք. 4-3րդ հազարամեակներու մշակութային շերտ մըն է, որ կը բացուի այս յայտնաբերումով: Յարգ ոչ Հայաստանի, ոչ ալ Հին Արեւելքի մէջ ասոր նման յուշարձան գտնուած է: Այս մէկը իր ծաւալով բացառիկ կառոյց մըն է. 200 հեկտարի լրայ տարածուող քաղաք-տաճար, որ կրնայ համեմատուիլ Շուշիի, Եզրիպոսի եւ Զինաստանի մէջ ստեղծուած ձեռակերտ հրաշալիքներուն հետ, չէտեց Փ. Աւետիսեան:

### ՀԱՅԱՍՏԱՆ ՄՏԱՀՈԳ՝ ՄԻՋԻՆ ԱՐԵԻԵԼՔԻ ԿԱՑՈՒԹԵԱՄԲ

10 Ապրիլին լրագրողներու հետ հանդիպման մը ընթացքին՝ ներկայացնելով Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան տեսակէտը արաբեւիստայէլեան տագնապին շուրջ, Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեան յայտնեց, որ Հայաստան եւս մտահոգ է արաբեւիստայէլեան տագնապով:

Ան ըսած է, որ Միջին Արեւելք կը գտնուի Հայաստանի անմիջական դրացնութեամբ եւ որեւէ անկայունութիւն կամ պատերազմական վիճակ իր բացասական ազդեցութիւնը կ'ունենայ շրջանին վրայ, մասնաւորապէս որ շրջանին մէջ կայ հայկական մեծ համայնք մը եւ պատմական արժէքներ:

Նախարար Վ. Օսկանեանի համաձայն, Միջին Արեւելքի կացութեան վերաբերել Հայաստանի մօտեցումը կը համընկնի երկրպական երկիրներու եւրոպական Միութեան եւ միջազգային ընտանիքին մօտեցումներուն:

### ՄԱՐԳՍԵԱՆ - ԱԼՏԻՆՊԱՅԵԻ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Հայաստանի նախագահին առընթեր ազգային անվտանգութեան խորհուրդի քարտուղար եւ պաշտպանութեան նախարար Սերժ Սարգսեան 11 Ապրիլին Ալմա Աթայի մէջ տեսակցութիւն ունեցած է Ղազախստանի պաշտպանութեան նախարար Գոր. Մուխթար Ալտինպայեւի հետ:

Հանդիպման ընթացքին քննարկուած են ռազմագիտական համագործակցութեան հարցեր, հաւաքական անվտանգութեան պայմանագրի շրջագիծին մէջ բազմակողմանի համագործակցութեան, ներկայ միջազգային իրավիճակին մէջ գործակցութեան զարգացման հեռանկարները, ինչպէս նաեւ թմրամոլութեան, թմրեցուցիչներու առեւտուրի եւ ապօրինի տեղափոխութեան դէմ միացեալ պայքարի հարցեր:

### ԾԱԽՈՒ ՅԱՐԿԱԲԱԺԻՆ

● Չալքա «Relax» թաղ, «Սելիք» շէնք, Ա. յարկ, 180 քառ. մետր: Գին՝ 80,000 տոլար: Հեռ. 03/325844 եւ 01/375115:

### ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԻ ՄՇԱԿՈՒՄ

Հայաստանի բնապահպանութեան նախարար Վարդան Այվազեան յայտնած է, որ Հայաստանի նախագահի զլխաւորութեամբ հայրենի պատուիրակութիւն մը վերջերս Տաճիկիստան եւ Նըրիսըգիստան կատարած այցելութեան շրջագիծին մէջ, միջկառավարական յանձնախումբներու հետ քննարկուած են «Լեռններու տարի» ծրագրի իրականացման, այդ առնչութեամբ օրէնսդրական դաշտի համապատասխանեցման, ինչպէս նաեւ զայն միասնական տեսակէտով միջազգային տարբեր կազմակերպութիւններու մէջ ներկայացնելու վերաբերող խնդիրները:

Միջկառավարական յանձնախումբի հայկական կողմի նախագահը եղող Վ. Այվազեանի համաձայն, տաճիկներուն հետաքրքրած է Հայաստանի մէջ ամերիկեան արագ աճող բարոյները աճեցնելու ծրագիրը եւ առաջարկուած է նոյնանման փորձ մը իրականացնել նաեւ Տաճիկիստանի մէջ:

Հանդիպումներուն ընթացքին նախապատրաստուած է բնապահպանական միացեալ գործունէութեան իրականացման վերաբերող ընդհանուր փաստաթուղթ մը, որուն քննարկումը պիտի կայանայ Մայիս - Յունիս ամիսներուն:

### ԹԻՖԼԻՍԻ ՍԻՄՖՈՆԻՔ ԵՆՈՒԱԳԱԽՈՒՄԻ ԿԱՏԱՐՈՂՈՒԹԵԱՄԲ ԱԻԷՏ ՏԵՐՏԵՐԵԱՆԻ ՄԻ. ՏԻ.Ի ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Վերջերս հրատարակուած է ճանչցուած յորինող Աւէտ Տէրտէրեանի ստեղծագործութիւններու Սի.Տի.Ն թիֆլիսի պետական սիմֆոնիք նուագախումբի կատարողութեամբ (նուագավար՝ Ճանսուկ Քախիճէ):

Սի.Տի.Ն մէջ ընդգրկուած են յորինողի թիւ 3 (սիմֆոնիք նուագախումբի, տուտուկի եւ զուռնայի համար) եւ թիւ 5 (սիմֆոնիք նուագախումբի եւ քամայի համար) սիմֆոնիները:

### ԳԻՐՔԻ ՇՆՈՐՀԱՀԱՆԴԵՄ՝ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻՆ ՄԷՋ

11 Ապրիլին Հայաստանի ազգային գրադարանին մէջ տեղի ունեցած է 82ամեայ ջալախցի արձակագիր, բանաստեղծ, պատմաբան եւ ազգագրագէտ Աւետիս Ազանցի Դաւթեանի «Հայկական եւ հայախառը բնակավայրերը Հիւսիսային Կովկասում» գիրքի շնորհահանդէսը:

Հեղինակը ուսումնասիրած է հարիւրաւոր ընտանիքներու կեանքն ու կենցաղը, պատմութիւնը, այսպիսով ազգագրական եւ հանրագիտարանային արժէք տալով իր ուսումնասիրութեան:

### ՄՇԱԿՈՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՆԵՐՈՒ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Մայիսի սկիզբը Հայաստանի, Վրաստանի եւ Ազերպէյճանի մշակութիւնի նախարարները պիտի հանդիպին Զուլիքերիոյ մէջ, իսկ անկէ ետք՝ Թեսաղոնիկէի մէջ: Հայաստանի մշակութիւն, երիտասարդութեան հարցերու եւ մարմնակրթութեան նախարար Ռոյանտ Շառոյեան տեղեկացուց, որ այդ հանդիպումներուն ընթացքին պիտի քննարկուին շրջանի մշակութային քաղաքականութեան վերաբերող խնդիրները:

**ՏԱՐԵՂԱՐՁԻ ԼԱՒԱԳՈՅՆ ՆՈՒԷՐԸ**  
VIDEOԻ ԿԱՄ ՇՈՒ ՎՐԱՅ  
VIDEO CLIPՆԵՐ  
ԱՆՁԻՆ ԱՆՈՒՆՈՎ ԵՒ ՄԱԿԱՆՈՒՆՈՎ  
Գիմէ՛ ԱՐԱ ԶԵՔԵՃԵԱՆ ԱՍՍ.  
Հեռ. 01 / 261696, 03 / 250518

«ԱԶԳԱԿ»Ի  
ՀԵՆՈՒԱԶԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ  
«ԱԶԳԱԿ»ի հետ կապուելու համար հեռաձայնել  
հետեւեալ թիւերուն. 258526, 260115 եւ 241274:

**Haigazian University**  
Faculty of Business Administration & Economics  
Building Excellence in Business Education  
Started accepting applications for the Fall semester 2002-2003 for the following degrees  
● Masters in Business Administration  
● Bachelor Degree in:  
● Business Administration  
● Economics  
● Business Administration Emphasis on:  
\* Hospitality Management in association with AHMA  
\* Management Information Systems in collaboration with ORACLE (Oracle Academic Initiative)  
\* Accounting (preparation for CPA)  
\* Legal Studies  
\* Advertising and Communication  
\* Finance (preparation for CFA)  
\*Haigazian University is a member of the Association of American International Colleges and Universities.  
For further information contact:  
Mexique Str., Kantari, Beirut  
Phone: 01-349230, 01-353010, 01-353012  
E-mail: admissions@haigazian.edu.lb  
Website: www.haigazian.edu.lb

**PHOTO RAFFI**  
Լուսանկարչական արագ, ապահով եւ մատչելի սպասարկութիւն բոլոր առիթներու համար  
❖ DIGITAL ՆԿԱՐԱՀԱՆՈՒՄ ԵՒ ՎԻՏՕ - ԵՐԻՉ  
❖ ԲԱՐՁՐՈՐԱԿ ՆԿԱՐԱՀԱՆՈՒՄԵՐ  
Միակ հասցէ. Պուրճ Համուտ, Լ. եւ Ս. Յակոբեան թաղ, 49/161: Հեռ. 03 / 703181  
E-mail: photoraffi@hotmail.com

**www.hamazkayin.com**

**We Give Services. Not Just Policies.**  
AFHIL  
ԱՖՏԻԼ AFHIL  
Սթի Ի Եժի, Բ. Յարկ, 36ն. Կապու. (01) 262231 242556 242557  
Imm. AFED, 2ème étage, Tél. and Fax: (01) 282231 - 242594 - 242557  
FOR THE SAKE OF OUR HEALTH AND YOURS DON'T SMOKE  
FOR THE SAKE OF OUR NERVES AND YOURS KEEP SILENT  
WATCH OUT! BABY ON BOARD  
EVEN THOUGH YOU'RE INSURED DRIVE SAFELY



Հարգարանը Մոտոսուսի

ՕՔՍՖՈՐՏ, ԹԻ ՍԹՐԱԹՖՈՐՏ

ԲԱՆԱԿԵԱԸ ԿԸ ՍՐԻ ԾԵՅՔՄՓԻՐԻ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ԾՈՒՐՁ: «ՆԻՒ ԵՈՐՔ ԹԱՅԱՁ» ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵ ԸԱԿԱԴԻՐ ԿԱՐԿԱՍԵՆԵՐԸ

Շ էյքսփիր Սթրաթֆորտ էյվլնի վրայ ծնած աշուղը չէր, այլ Օքսֆորտի 17րդ դարու դուքսը՝ Էտուլըտ Վիր։ Օքսֆորտցիներուն համար այս է պատասխանը «Ո՛վ գրած է Շէյքսփիրի գործերը» հարցումին։

Ասիկա երկար ատեն է ի վեր բանավէճի նիւթ է եւ հետզհետէ հող կը շահի վերջին տարիներուն։ Վերոյիշեալ հարցումը վերնագիրն էր անցեալ Յունուարին Ուաշինկթոնի Սմիթ-սոնիլըն հիմնարկին մէջ տեղի ունեցած համագումարի մը, որ իրարու հակադրած է ընտանիքներ, բարեկամներ եւ անգլերէնի գիտութեան ամպիոններ։ Շէյքսփիրը կարեւոր է մեզի համար։ Այո՛, անկասկած։ Տարուէ տարի կը բազմանան Շէյքսփիրի անունը կրող թատերախումբերը եւ անոր նուիրուած փառասունները։ Սակայն թատերական աւանդի մը զագաթը ըլլալէ աւելի՛ ան անգլերէն լեզուն կերտած հանճարն է։

Ակադեմական աշխարհը դարեր շարունակ անտեսած է Շէյքսփիրի գործերուն հեղինակութեան հարցը կամ գայն նսեմացուցած է իրրեւ սիրողական ուսումնասիրողներու արտառոց մէկ խանդավառութիւնը։ Դարեր շարունակ ուսումնողներու միտքին մէջ արմատացած է 1769ին Շէյքսփիրի ծննդեան 50ամեակին առիթով ողբերգակ դերասան Տէյլփոտ Կէրիքի ստեղծած պատկերը, որ հիմը դրած է դէպի Սթրաթֆորտ գրասալը լեզուի ճարտարապետին։ Կէրիք տարածած է պատկերը համեստ ընտանիքէ սերած տիպարի մը, որ բարձրացած է մինչեւ գրական դէմքերու պանթոնը։ Ակադեմականներուն մեծամասնութիւնը տակաւին կը բաժնէ այս տեսակէտը։

Շէյքսփիրի գործերուն հեղինակութեան վերաբերող այլ տեսութիւններ կ'ըսեն, թէ անոնք գրուած են փոխադրուած եւ պետական գործիչ Ֆրենսիս Պէյքընի, թատերագիր Քրիսթֆֆօր Մարլոյի կամ այլ գրագէտներու կողմէ։ Պէյքընի վարկածը նսեմացած է, երբ Շէյքսփիրի գրութիւններուն մէջ անոր յատուկ գաղտնի բառերուն փնտրուածք ոչ մէկ արդիւնք տուած է։ Ինչ կը վերաբերի Մարլոյի եւ այլ գրագէտներու հեղինակութեան, հարցը այն է, որ անոնք գործերը մեծապէս կը տարբերին Շէյքսփիրի թատերագութիւններէն։

Սակայն Օքսֆորտի տեսութիւնը երբեք չէր յաջք գործել չէ եղած։ 2000ին Մասաչուսեթսէն ուսումնասիրող մը պաշտօնապէս աւարտածաւ մը, որ հիմնուած էր այն ենթադրութեան վրայ, թէ էտուլըտ Վիր գրած է Շէյքսփիրի թատերագութիւնները։ Անոր 500 էջերէ բաղկացած աւարտածաւ լուսարձակի տակ կ'առնէ Շէյքսփիրի թատերագութիւններուն մէջ արտացոլացող Օքսֆորտի դուքսին կեանքը, ինչպէս նաեւ՝ նմանութիւնները անոր թատերագութիւններուն եւ էտուլըտ Վիրի բանաստեղծութիւններուն միջեւ։

Ամէնէն աւելի վիճելի կէտերէն մէկը թատերագութիւններուն թուականն է։ Հակադիր կողմեր հետեւեալ ձեւով կը ներկայացնեն իրենց ապացոյցները։

Սթրաթֆորտցիք կ'ըսեն, թէ Շէյքսփիր 10 թատերագութիւն գրած է 1604էն ետք, իսկ Օքսֆորտի դուքսը մահացած է նոյն տարուան Յունիսին, հետեւաբար անոր հեղինակութիւնը հաւանական չէ։ Սակայն օքսֆորտցիք կը վիճեն, թէ նշուած թուականը սխալ է։ «Ոչ մէկ ապացոյց կայ, թէ Շէյքսփիր որեւէ գործ գրած է 1604էն ետք», կը գրէ Օքսֆորտի դուքսին հեղինակութեան վարկածին ջատագովներէն Շարլոթը Օկպոն իր «Տը Միսթրիս Ուիլիամ Մէյքսփիր» գիրքին մէջ, զոր օքսֆորտցիք կը համարեն յատկանշական գործ մը։ Անոնք նաեւ կը մէջբերեն 1969ին «Տը քըմփիլիս փելիքը Շէյքսփիր» գիրքին խմբագիր Ալֆրէտ շարպէյնի նշած «Տը թեմփիւք» եւ «Հեմրի Ը.» թատերագութիւնները անվիճելիօրէն գրուած են 1604էն ետք։

Սթրաթֆորտցիք կ'ըսեն, թէ «Տը քեմփիւք» թատերագութիւնը գրուած է 1609ին, Պերմուտայի մէջ նաեւ մը խորտակումէն ետք, որուն մասին պատմած է Ուիլիամ Սթրաչի։ Սակայն Օկպոն կ'ըսէ, թէ Սթրաչիի պատմութիւնը հրատարակուած է 1625ին։ Ան իրրեւ ներշնչուող հաւանական աղբիւրներ՝ կը նշէ 1593ին Պերմուտայի մէջ պատահած նաւաբեկում մը եւ 1602ին Սաութեմթթընի դուքսին նաւագնացութիւնը դէպի Մասաչուսեթսի մէկ կղզին։ Սաութեմթթընի շենքի Ռայթթեյլի դուքսը աւանդաբար կը նկատուի Շէյքսփիրի հնչեակներուն «խարտեալ երիտասարդը», որուն ուղղուած են բանաստեղծին հետադարձական հարցումները, եւ որուն ան նուիրած է «Վիլիամ Էտուլըտ» եւ «Տը Ռեյփ աֆ Լիւքսեթ» երկար բանաստեղծութիւնները։

Ինչ կը վերաբերի «Հեմրի Ը.» թատերագութեան, սթրաթֆորտցիք կ'ըսեն, թէ բանաստեղծ եւ դիւանագետ Սըր Հեմրի Ուոթթըն 1613ին նամակի մը մէջ կը նկարագրէ թատերախաղին ներկայացումը, որուն ընթացքին հրոյ ճարակ դարձած է Շէյքսփիրի «Տը կլոպ» թատերասարսը։ Միւս կողմէ օքսֆորտցիք կ'ըսեն, թէ Ուոթթըն սխալած է, եւ թէ՛ 3 այլ աղբիւրներ գայն նոր թատերախաղ մը չեն համարեր։ 18րդ եւ 19րդ դարու պատմութեան մասնագէտներ գայն կը տեղադրեն էլիզապէթ


թագուհիին իշխանութեան ժամանակներուն մէջ, 1603էն առաջ։

Էտուլըտ Վիր կամ Օքսֆորտի դուքսը ծնած է ազնուական ընտանիքի մէջ, հայրը մահացած է, երբ ան 12 տարեկան էր։ Հետագային ան էլիզապէթ թագուհիին գլխաւոր թարտուղար Ուիլիամ Սեմիլի թիկնապաշտ եղած է։ Մօրեղբայրը՝ Արթըր Կոլտինկ անգլերէնի թարգմանած է Ուիլիամի «Վերպարա-նա փոխումը»։ Գիրք մը, որուն ազդեցութիւնը անվիճելի է Շէյքսփիրի գործերուն մէջ։

Օքսֆորտի դուքսին անունը որոշ չափով նսեմացած է, երբ ան խոհարար մը սպաննած է Սեմիլի տան մէջ։ Սակայն ան բանաստեղծ էր, թատերագիր եւ հովանաւոր՝ անգլիական վերածնունդի ժամանակաշրջանի գրագէտներու, որոնք բազմաթիւ գործեր նուիրած են դուքսին։ Ան ճամբորդած է դէպի Ֆրանսիա եւ Իտալիա, այցելած է այն քաղաքները, ուր Շէյքսփիր տեղադրած է իր թատերախաղերը։

Սթրաթֆորտցի «Շաքսփիր» էն կամ «Շաքս» էն մեզի հասած է միայն 6 ստորագրութիւն (անոր ձեռագրի միակ օրինակները)։ Ան երկու անգամ ստորագրած է «Շէյքս» անունով։ Օքսֆորտցիներու համաձայն, Շաքսփիր գործատէր էր, դրամ փոխ կու տար եւ կը շահարկէր կալուածներու, ինչպէս նաեւ թատերախումբերու մէջ։ Անոր ծնողները եւ վաճառները անգրաճանաչ էին, ինք ոչ մէկ գիրք ունէր, եւ անոր ուսման մակարդակին մասին միայն ենթադրութիւններ կարելի է կատարել։ Նոյնպէս, միայն ենթադրութիւններով կարելի է գայն առնել էտուլըտ Վիրի հետ։ Սակայն կարգ մը օքսֆորտցիներ կ'ըսեն, թէ Շաքսփիր պայմանագրութիւն մը կնքած էր ճանչցուելու համար իրրեւ թատերախաղերու հեղինակ, սակայն գաղտնիք չէր, որ Օքսֆորտի դուքսը կը գրէր գանտիք։

Առաջին անգամ 1920ին յայտնուած է այն կարծիքը, թէ Շէյքսփիրի գործերուն հեղինակը Օքսֆորտի դուքսն է։ Բերականութեան եւ լեզուի ուսուցիչ մը՝ Թամար Լուին, որ երկրորդական վարժարանի մը մէջ ամէն տարի կը դասաւանդէր Շէյքսփիրի «Տը մըրչընթ աֆ



Աշպուռնի դիմանկարը կը պատկերէ Օքսֆորտը։

գոհացնող միայն մէկ գրագէտ՝ Օքսֆորտի դուքսը։

Լուին իր «Շէյքսփիր ալոնքիֆայտ» գիրքին մէջ (1920) կը բացատրէ, թէ Օքսֆորտի դուքսը ունէր իր ակնկալած բոլոր յատկանիշները՝ դասական կրթութիւն, վարդերու պատերազմին մէջ կարեկցանք՝ Լանքեսթրի տան նկատմամբ, հոռոմէական կաթոլիկ հակումներ, ազնուական խաւի յատուկ աշխարհաշայնեցք, գրական ճաշակներ, սիրոյ եւ ատելութեան յարաբերութիւն մը՝ կիներու հետ, Իտալիոյ ծանօթութիւն, հետաքրքրութիւն թատրոնի, երաժշտութեան եւ մարզախաղերու նկատմամբ։

Վերջերս հին տարակարծութիւններ վերականգնացան իրրեւ «Աշպուռնի դիմանկարը» ճանչցուած գեղանկարի մը առնչութեամբ։ Ուաշինկթոնի «Ֆոլքեր Շէյքսփիր» գրադարանը երկար ժամանակ գայն Շէյքսփիրի դիմանկարը կը համարէր։ 1940ին «Սալթըրիֆիք Ըմբրիքը» թերթին մէջ լուսանկարներու մասնագէտ Ջարլո Ուայքըրը Պարէլ գրած է, թէ «Աշպուռնի դիմանկարը» կը պատկերէր Օքսֆորտի դուքսը։ Բէ. ճառագայթով առնուած եւ ենթակարմիր լուսանկարներու քննութիւններէ ետք Պարէլ բարարար ապացոյցներ գտած է հաստատելու համար, որ դիմանկարը կը պատկերէ Օքսֆորտի դուքսը եւ անոր տոտեմը՝ վարագի զուլն մը, ինչպէս նաեւ՝ հոյանտայի գեղանկարիչ Քորնելիուս Քեթրի ստորագրութիւնը։ Պարէլ կ'ենթադրէ, որ դիմանկարը գծուած է 1580ի շուրջ։

Սթրաթֆորտցիք հաճոյքով չէին դիմաւոր

ԺԱՌԱՆԳՈՒԹԵԱՆ ԵՒ ԸՆԴՈՐՈՒՆԱԿՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԵՐ

ԳԵՂԱՆԿԱՐՉՈՒԹԻՒՆԸ ԺԱՌԱՆԳՈՒԱԾ ԱՐՇԵՍ ԵՐ ՊՐԻԿԵԼ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՍԵՋ: «ՈՈՅԹԸՐԶ» ԿԸ ՆԿԱՐԱԳՐԵ ԱՅՍ ԳԵՐԴԱՍՏԱՆԻՆ ԳՈՐԾԵՐՈՒՄ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՅՈՒՑԱՆԱԿԵՍ ՍԸ ՊՐԻԿԵԼԻՍ ՍԵՋ

Չ աւակը կը նմանի հօրը՝ այս ասացուածքը ոչ մէկ տեղ նոյնքան ճիշդ կը հնչէ, որքան Պրիկէլ ընտանիքին մէջ։ 16րդ դարու ֆլեման արուեստագէտ Փիեթր Պրիկէլ Երէջ հիմնած է գեղանկարչներու գերդաստան մը։

Ֆլանտերի գեղանկարան միջավայրին մէջ տեղադրուած Աստուածաշունչի եւ դիցաբանական իր տեսարաններով հռչակաւոր Պրիկէլ ծնած է 1525ին՝ Պրետա եւ 1551ին դարձած է անդամ Անվերի գեղանկարչներու համագործակցութեան։

Վարպետ գեղանկարիչին երէջ մանչը՝ Փիեթրը ծնած է իր հօր մահէն 5 տարի առաջ։ Ան ոչ միայն կրած է իր հօր անունը, այլ նաեւ ամբողջ կեանք մը անցուցած է ընդօրինակելով իր հօր ժողովրդականութիւն վայելող գեղանկարան եռուն կեանքի պատկերները։

«Պրիկէլ Էնթրփրայզը» վերնագիրով ցուցահանդէս մը, Պրիկէլի Էնթրփրայզը Արուեստի թանգարանին մէջ, նուիրուած է ընդօրինակութիւններու նկատմամբ 17րդ դարու մարմաղին։ Յուզահանդէսը առաջինն է, որ կը մէկտեղէ Փիեթր Կրտսերի աշխատանքները մէջ կատարուած վերարտադրութիւնները։

Երեք ամիս տեւողութեամբ ցուցահանդէսը, որուն բացումը կատարուեցաւ 22 Մարտին, անլույս կը ձգէ այն հարցը, թէ արդեօք Պրիկէլ Կրտսեր կը պաշտէ՞ր իր հայրը, թէ պարզապէս կ'ուզէր օգտագործել անոր հռչակը՝ վերարտադրելով անոր ամէնէն անուանի գործերը եւ գոհացնելով իր յաճախորդները։

Ցուցահանդէսը վերատեսութեան կ'ենթարկէ ընդօրինակութեան նկատմամբ այսօրուան ժխտական վերաբերումը։ Յուզահանդէսին կազմակերպիչները կը շեշտեն, թէ 400 տարի առաջ ընդօրինակելու գեղծարարութիւն կամ ինքնատպուցութեան պակաս չէր նշանակեր։ Ցուցահանդէսը կ'ընդգրկէ Փիեթր Երէջի թրձինի պատկանող 3 գործեր։ «Մարդահամար Բեթղեհէմի մէջ», «Ձմեռնային բնանկար՝ թռչունի թակարդով» եւ «Լմբոստ հրեշտակներուն անկումը»։ Յարց յստակ չէ, թէ արդեօք ցուցադրուող այլ գեղանկար մը՝ «Իգարուսի անկումը» ընօրինակ մըն է։

ԿՐԱԿԱՐԱՆԻ ԱՐՈՒԵՍ

Պրիկէլ Երէջ կը պատկանէր Ֆլանտերի մէջ ծնունդ առնող գեղանկարիչներու նոր սերունդի մը, որ կը հեռանար ռեալիստիզմի մանրանկարչութեան եւ ձեւի կատարելութեան հասնելու իտալական ձգտումէն՝ իրապաշտութեան մէջ կերտելու համար իր սեփական արուեստը, ոճի եւ նիւթի ուրոյն պատկերումով։



«Բաբելոնի Աշտարակը» - Պրիկէլ Երէջ։

Պրիկէլի գաւկին ընդօրինակութիւնները հաւանաբար այսօրուան որմագոյներուն նման կը զարդարէին առեւտրականի մը տան կրակարանին պատը։

«Անոր աշխատանոցէն արտադրուած գործերուն քանակութիւնը մեծ էր։ Երբ այսօր 140 օրինակ ունինք «Ձմեռնային բնանկար» գործէն, կը նշանակէ, թէ այս գեղանկարը շատ մեծ ժողովրդականութիւն կը վայելէր, - կ'ըսէ պուստալագէտին գլխաւոր պատասխանատուն՝ Փեթր վան Տէն Պրիքը։ - Այս արուեստը պարզ մարդոց համար էր։»

Ցուցահանդէսին մերկ պատերուն վրայ «Մարդահամար Բեթղեհէմի մէջ» եւ «Ձմեռնային բնանկար» գործերուն շուրջ կախուած են Փիեթր Կրտսերի աշխատանոցէն արտադրուած 10 ընդօրինակութիւններ։

Կազմակերպիչներուն համաձայն, ցուցահանդէսը ակնգիրին կը մղէ կեդրոնաշարու

րած այս վերլուծումը։ Ֆոլքեր գրադարանը իր սեփական ուսումնասիրութիւնը կատարելէ ետք եզրակացուցած է, թէ դիմանկարը կը պատկանէր Հիւկ Համբըրսէյլի, որ Լոնտոնի քաղաքապետ էր 1627ին 1628ի միջեւ։ Գրադարանին պատասխանատուները մինչեւ այսօր կը պաշտպանեն այս տեսակէտը։ «Սակայն իրրեւ հիմնարկ որեւէ կեցուածք չենք որդեգրած Շէյքսփիրի գործերուն հեղինակութեան հարցին նկատմամբ», կ'ըսէ գրադարանին տնօրէնը՝ Վերնըր Կանտըրըյալմըր։ Ան Շէյքսփիրի հեղինակութեան առնչուող տարակարծութիւնները կ'արհամարհէ իրրեւ սալոնի խաղ մը, որ ուշադրութիւնը կը շեղէ անոր թատերագութիւններէն։

Օքսֆորտցիներուն տեսակէտը պաշտպանող «Շէյքսփիր Ֆելոշիպ» միութիւնը իր «Շէյքսփիր Մեթըրք» թերթին վերջին թիւերէն մէկուն մէջ կը զարգացնէ Պարէլի կարծիքը եւ որոշ ապացոյցներով կը փաստէ, թէ պատկերուած անձին հագուստները բնորոշ են 1580ի նորածնութեան։ Այդ թուականին Համբըրսէյլ 15 տարեկան էր, Օքսֆորտի դուքսը՝ 30, եւ Քեթրը կը ստեղծագործէր Անվերոյ մէջ։

Սակայն օքսֆորտցիք կը դիմագրաւեն դժուար հարց մը. ինչո՞ւ Օքսֆորտի դուքսը թաքուն պիտի պահէր իր հեղինակութիւնը։ Սովորական պատասխանը պիտի ըլլար այն, որ էտուլըտ Վիր ծածկանունը մը գործածած է. ազնուական խաւէ սերած մարդիկ արժանաւժայել չէին համարել իրենց անունը կցել հրապարակաւ ներկայացուած թատերախաղերու։ Սակայն իրականութիւնը ինչո՞ւ երեւան չէ եկած Օքսֆորտի դուքսին մահէն ետք։ Սմիթ-սոնիլըն հիմնարկին մէջ կայացած համագումարին առիթով Օքսֆորտի դուքսին վարկածին դէմ վիճող մասնագէտ մը՝ Ռիչըրտ Ուալէն ըսած է. «Պատճառ չկայ, որ Օքսֆորտի դուքսը իրրեւ հեղինակ չլինատակուէր առաջին ֆոլիոյն հրատարակութեան առիթով»։

«Շէյքսփիր Քորթըրլի» թերթին խմբագիրը՝ Կէյլ Քուն Փասթըրը, որ համաձայնաբար ընթացքին վիճած է Օքսֆորտի դուքսին հեղինակութեան վարկածին դէմ, հարց տուած է. «Ինչո՞ւ շարունակել գրական այս զարդարուն շար կատարել։ Ո՞վ կարիքը ունի պաշտպանութեան»։

(ՅԱ.ՊԱՒՈՒՄԱՍ)

ՉԱՂԿՈՂ ԲԱՅՑ ԳՈՐՈՎԱԼԻ

«Փիեթր Երէջ մարդկային վիճակը հասկընալու շատ ուշագրաւ տեսական մը ունէր, - կ'ըսէ թանգարանի պատասխանատունը։ - Ան ձաղկող մօտեցում մը ունէր, սակայն նաեւ գործվալի էր մարդկութեան նկատմամբ։ Ան թերեւս կը ծաղրէ մարդիկը իր գեղանկարներուն մէջ, սակայն կը գրասու, որ նաեւ կը սիրէր էր գեղանկարը։»

Առաջին ակնարկով՝ ընդօրինակութիւնները հաւատարիմ վերարտադրութիւններ կը թուին ըլլալ, սակայն աւելի մոլոր, աւելի պայծառ եւ աւելի սրճագոյն երանգներով։

### ԺԱՌԱՆԳՈՒԹԵԱՆ ԵՒ ԸՆԴՕՐԻՆԱԿՈՒԹԵԱՆ...

Շարունակում է 7րդ էջէն

Այսուհետև դերը վերջնական արդիւնքը ցոյց կու տայ ընդօրինակողներուն փորձառութեան տարբեր տակադրակները: Կարգ մը զեղչումներ, ինչպէս՝ չմշկելու իր կօշիկները հազնոդ մանչուկի մը կամ մար մտնող արեւուն կորսուած պատկերը մտածել կու տան, թէ ֆիեթը կրտսեր եւ անոր աշակերտները օգտագործած են Պրիւկէլ Երէցի մատիտով ճեպանկարները, առանց երբեք տեսնելու անոնց հիման վրայ գծուած վերջնական բնօրինակները:

«Չեմ կարծեր, որ այս զեղանակները կատարելաւ աւարտի հասած են», կ'ըսէ վան Տէն Պրիւկէլ: Կարծէք աշակերտները զանոնք գծած են երկու ամսուան մէջ, մինչդեռ Պրիւկէլ Երէց քանի մը տարի կը յատկացնէր իւրաքանչիւր զեղանակարի:

Թէեւ Պրիւկէլի զակիին աշխատանքը բեղուն էր, սակայն արուեստի մասնագէտներ կ'ընդունին, թէ Պրիւկէլ Երէց աւելի տաղանդաւոր զեղանակարիչ էր:

«Ան աւելի մեծ հանճար մըն էր, որովհետեւ շատ նորարար էր», կ'ըսէ վան Տէն Պրիւկէլ: Ինչպէս, որ Պրիւկէլ Երէց ձեռքով պատկերած առաջին զեղանակարիչներէն է:

Յարգ յայտնի չէ, թէ արդեօք Պրիւկէլ կրտսեր, որ հետագային կրած է «Դժոխք Պրիւկէլ» փառաբանական անունը, ճիւղներ, ուրուականներ, կրակ եւ սարսափազդու հրէշներ պատկերելուն համար, երբեւիցէ ձեռքագտած է իր հօր ազդեցութենէն:

«Չենք գիտէր, թէ ան իրեւն զեղանակարիչ ի՞նչ դիրք կը վայելէր», կ'ըսէ վան Տէն Պրիւկէլ: Ոչ ոք գիտէր, թէ ով էր ան:

Պրիւկէլ Երէցի մահէն ետք ֆիեթը կրտսեր իր եղբոր՝ Եանի հետ ապրած է իր մեծ մօր՝ Մայքէն վերահսուածի հետ, որ ինքնին արուեստագիտուհի էր: Կ'ենթադրուի, որ ան զեղանակարչութիւն սորվեցուցած է իր երկու թոռներուն, մինչեւ որ ֆիեթը կրտսեր վարպետ դարձած է եւ 1585ին հիմնած է իր սեփական աշխատանոցը Անվէրի նաւահանգիստ քաղաքին մէջ:

Փիեթը կրտսերի գործը շահաբեր էր, թէեւ արիւնային արձանագրութիւններ ցոյց կու տան, թէ ան յաճախ նիւթական նեղութեան մէջ էր:

«Միշտ այն տպաւորութիւնը ունեցած եմ, թէ ան աղքատ մարդ մըն էր եւ մեծ պարտքեր ունէր, թէեւ շատեր նաեւ պարտական էին իրեն, ինչ որ կ'ապացուցէ որոշ դիրք մը», կ'ըսէ վան Տէն Պրիւկէլ:

Թէեւ ցարդ կարելի չէ պատասխան մը գտնել այն հարցին, թէ արդեօք ֆիեթը կրտսեր յուսալիցաբար արուեստագէտ մըն էր, դատաւարտուած՝ ընդմիջ տարիներ իր հօր շուքին, սակայն Պրիւկէլի գլուխ գործոցներուն ընդօրինակութիւնները բաւարար են ապացուցելու, թէ ան ինչպիսի առեւտրական մըն էր:

«Փիեթը կրտսեր իր հօր փառքը օգտագործած է իր հաշուոյն», կ'ըսէ թանգարանին պատասխանատուները:

La lumière en privilège  
ou lumière en privilège

**G. AYANIAN & SONS**  
Dora, (01) 255222/3/4/5/6 - Gemmayé, (01) 447000-445396 - (03) 627728/9. Fax: (01) 265187-582357

«ԱՉՂԱԿ»Ի ՄԵՉ ԾԱՆՈՒՑՈՒՄԻ ՀԱՄԱՐ

Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազդակ»ի մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը խմբագրատունը՝ ծանուցումներու բաժանմունք հասցնեն հրատարակման թուականէն առնուազն օր մը առաջ, ՄԻՆՉԵՒ ԵՐԵՎԱՆԻ ԺԱՄՐ 5:00:

ՄԱՀԱՉԳԻՆ ԵՐԸ բացատրութիւն եմ: Մահագո կ'ընդունուի մինչեւ ուշ գիշեր, այնքան ատեն որ զայն հրատարակելու հնարատրութիւն կայ:

STUDIO  
**Lantern**

• Կը ստանձնէ ուրախ առիթներու video նկարահանումներ

Հեռ. 01-266866  
Ել 03-695399

ՄԱՆՈՒԿԵԱՆ ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆ

ՎԱՉԷ ԵՒ ԹԱՍԱՐ ՄԱՆՈՒԿԵԱՆ Համալսարանական Կրթաթոշակ 2002-2003 Տարեշրջան

- 1.- Մանուկեան Բարեսիրական Հիմնարկութեան Վաչէ եւ Թամար Մանուկեան Համալսարանական Կրթաթոշակի յատկացումներու բաժանմունքը՝ 2002-2003 ուսումնական տարեշրջանին համար պիտի յատկացնէ որոշ թիւով կրթաթոշակներ նախկին եւ նոր արժանաւոր ուսանողներու եւ թեկնածուներու:
- 2.- Հիմնարկութեան ծրագիրը կը վերաբերի միմիայն այն ուսանողներուն, որոնք համալսարանական լրիւ մակարդակ ունեցող ուսումնասիրական հաստատութիւն մը պիտի յաճախեն կանոնաւոր կերպով:
- 3.- Թեկնածուները պարտին ունենալ ուսումնական բարձր մակարդակ եւ ընդունուած ըլլալ նուազագոյնը Sophomore դասարանը՝ ամերիկեան համալսարաններուն մէջ, կամ համապատասխան դասարան մը՝ այլ համալսարաններու պարագային:
- 4.- Մանուկեան Համալսարանական կրթաթոշակ ստացող ըլլող նախկին ուսանողները, ինչպէս նաեւ նոր թեկնածուները պարտին ներկայանալ հիմնարկութեան գրասենեակը՝ 15 Ապրիլէն 20 Մայիս (բացի Շաբաթ օրերէն), կէսօրուան ժամը 12:00էն մինչեւ կէսօրը ետք ժամը 5:00, ստորեւ յիշուած հասցէին, ստանալու համար կրթաթոշակի դիմումագիրը:

ՀԱՍՅԷ. Ժէլ Էլ Տիպ հրապարակ, «Մալլահ» Սենթրը, Տրոյ յարկ, հեռաձայն՝ 04-713532:

Հ.Բ.Բ.Մ.Վ.Ե.Ը. «ԱԼԵԿ ՍԱՆՈՒԿԵԱՆ» ԿԵԴՐՈՆ ՆՅԱԿՈՒԹԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄ

15 ԱՊՐԻԼ 1906

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄՈՒԹԵԱՆ ԵՄՍԱԳՐՈՒԹԻՒՆ ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՐԵՎԱՆ

Նուիրում՝  
ՊՕՂՈՍ ՆՈՒՊԱՐ ՓԱՇԱՅԻ

Բանախօս՝  
**ՍԵՐՈՒ ԱՐՈՅԵԱՆ**

Տեղի կ'ունենայ Գործընթացի, 17 Ապրիլ 2002, երեկոյան ժամը 7:30ին, «Ալեք Մանուկեան» կեդրոնին մէջ, Ուսթուար:

• ԳԵՂԱՐՈՒԹԵՍԱԿԱՆ ՅԱՅՏԱԳԻՐ

ԵՐԱԵՐ

### ☆ Ի՞նչ կ'ըսեն ԱՍՏՂԵՐԸ ☆

☆ **ԽՈՑ** (21 Մարտին 20 Ապրիլ)  
Այսօր տրամադիր էր գուարճանալու. այդ ձեռք իրաւունքն է, բայց ուշադիր եղէք, որ երկար ժամանակի վրայ նոյն տրամադրութեամբ չմնաք:

☆ **ՑՈՒԼ** (21 Ապրիլէն 21 Մայիս)  
Վիճարանիւր, ոխը լաւ բաներ չեն. եթէ նոյնիսկ մանր մուր սխալներ տեսնէք ուրիշներուն մօտ, եղէք հանդուրժող: Օրը նպաստաւոր է բարեկամական մթնոլորտի մէջ մնալու:

☆ **ԵՐԿՈՒՈՐԵԱԿ** (22 Մայիսէն 21 Յունիս)  
Հեռու մնացէք խնդրալարոյ խօսակցութիւններէ, որովհետեւ ձեր խօսքերը կրնան ձեր մտածումներէն յոռաջ անցնիլ: Այսօր փափկանկատութիւնը պիտի պակսի ձեզի, հետեւաբար հանդուրժող մնացէք:

☆ **ԽԵՅԳԵՏԻՆ** (22 Յունիսէն 23 Յուլիս)  
Բարեկամի մը հետ գոյց մը պիտի տայ ժխտական արդիւնք, որուն մասին բնաւ չէիք մտածած: Ձեր քննադատական խիստ սեղանի վրայ ձեր վարկին:

☆ **ԱՌԻԻՄ** (24 Յուլիսէն 23 Օգոստոս)  
Աշխատանքի մարզին մէջ պիտի ունենաք պաշտօնի բարձրացում: Կը թուի, թէ ձեր մեծերը հասկցած են ձեր զգոհութիւնը, ձեզի հանդէպ եղած անարդարութիւնը եւ բաւած են իրենց մեղքը: Ուրախացէք:

☆ **ԿՈՅՄ** (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր)  
Ձեր հեղինակութիւնը խնդրոյ առարկայ կրնայ ըլլալ այսօր, քանի որ քիչ մը շատ չղայնացած էք եւ կը պտտաք ձեր պաշտօնակիցներուն կամ գործակիցներուն վրայ: Քիչ մը մեղմացուցէք ձեր վերաբերումը:

☆ **ԿԵԻՌՔ** (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր)  
Ձեր հաշիւներուն լաւ հսկեցէք, լելի եւ մուտքի պարագային հաւասարակշռութիւնը պահեցէք, որպէսզի ձեր գրպանը չպարպուի յանկարծ...:

☆ **ԿԱՐԻՃ** (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր)  
Սիրոյ մարզին մէջ քիչ մը չափազանցութիւն նկատելի է ձեր վերաբերումին մէջ, ու արիւնք հակառակ ձեր կամքին: Չափաւորեցէք ձեր ախորժակը եւ մնացէք հաւասարակշռուած տրամադրութեամբ:

☆ **ԱՆՆԱՒՈՐ** (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր)  
Ձեր սխալ գործերը կը բազմացնէք, անոնք կը դիզուին իրարու վրայ: Թէեւ դիտողութիւններ չեն ընեն ձեզի, բայց մարդիկ նկատի կ'առնեն ձեր սխալները եւ կը մտածեն այդ մասին:

☆ **ԱՅԾԵՂՋԻՒՐ** (22 Դեկտեմբերէն 20 Յունուար)  
Եթէ մարզանքով կը զբաղիք, ուշադիր եղէք, որ չափը չանցնէք: Կամ չափաւոր եղէք որեւէ աշխատանքի պարագային:

☆ **ԾՈՎԱՆՈՅՇ** (21 Յունուարէն 19 Փետրուար)  
Ձեր ընտանիքի անդամներուն հետ բացատրութիւն մը տալու պիտի ստիպուիք: Բայց ճիշդ ժամանակը գիտցէք, որպէսզի հարցը թունաւոր վեճի չվերածուի:

☆ **ՁՈՒԿ** (20 Փետրուարէն 20 Մարտ)  
Եթէ տրամադրութիւն չունիք այս իրիկուն տուրքերու դուրս ելլելու, հնազանդեցէք ձեր նախագացումին, որովհետեւ իրաւամբ կ'ախ երեսով պիտի մնաք մարդոց դիմաց:

**ՕՐԱՏԵՏՐ**

**Panasonic**

ԸՆՈՒՏԵՍԻԼ

Ժ.Է.Լ. 10:00.- Մապահօ 13:00.- Մարտի Հանա

14:00.- Եւրոնիւզ 14:30.- Լուրեր 15:00.- Մըն Եւանու Լաւանու 16:30.- Ալպան 17:00.- Ամերիկեան ֆիլմաշար 18:00.- Կենդանի Գծանկար 19:30.- Լուրեր 20:00.- Արաբական ֆիլմաշար 21:00.- Թոթըլ Ռիթըր 22:00.- Ամերիկեան ֆիլմաշար 23:00.- Մէլքոյմ Էքս

ԷՄ. Թ.Վ. 6:30.- Տորնայ Էմ. Թ.Վ. 7:30.- Թելէ մարտի

09:30.- Մինի Սրուտիօ 10:30.- Քի է քի 11:00.- Ուս քրնսա 11:30.- Էմ. Թ.Վ. սփորթ 12:00.- Քըլ մէլլէ սոլէ 13:00.- Մարիա Մալեպէ 14:00.- Տորնայ Ֆրանս 2 14:45.- Մի. Էն. Էն.ի լուրեր 15:15.- Աղանի աղանի 16:30.- Փոքեմնի 17:00.- Մինի սրուտիօ 17:45.- Թ.Վ. Թ.Վ. 18:45.- Էնամորատու 20:00.- Արաբերէն լուրեր 20:30.- Տամիլիա 21:45.- Սամմէլ մարտի 23:45.- Էմ. Թ.Վ. սփորթ 00:00.- Թաշտ պայ էն էյնձըլ

Է.Պ.Ս. 7:00.- Մի. Էն. Էն.ի լուրեր 7:30.- Լէրի Քինկ լայլ

08:25.- Մա ըլլաք իլլա Հայֆա

09:00.- Սփորթ լայթ 10:00.- Չաուայա 10:30.- Նահարընու սայիտ 14:00.- Էնամորատու 15:00.- Լուրեր 15:15.- Էլ Էնու մէլ էլ էմէն 17:00.- Թելէսփոր 18:55.- Հէյք սար 19:00.- «Հայաթի Ալպա» 20:00.- Արաբերէն լուրեր 20:30.- Մամուտ 21:30.- Ամերիկեան

ՄՈՒՍՈՎՔՊԱԼ 08:30.- Ալմա ալ սապահ 13:00.- Յիշ ինֆօ

13:05.- Լուրեր 14:00.- Անվերէնով լուրեր 14:20.- Ֆրանսերէնով լուրեր 14:40.- Հայերէնով լուրեր 15:30.- Արաբ. ֆիլմաշար՝ «Տաւանըմ կարտըն սիթի» 16:30.- Թելէսփոր 17:00.- Ըլլար ըլլար 17:30.- Պիլ Նայ 18:00.- Արաբական ֆիլմաշար 19:00.- Ալ ֆախ 20:00.- Արաբերէն լուրեր 20:30.- Ռուսու մուրահարիւր 20:35.- Ալիայաքա առաւօք 21:30.- Միլէ ուրնֆաթաիթ 23:30.- Ալ ֆախ

ԷՆ. Պ. ԷՆ. 15:00.- Լուրեր 16:00.- Անպահ Լուպան 17:30.- Մինեմ/35 mm. 18:00.- Նո քոմէնք լուրեր 18:45.- «Քայաթ Իսրաիլ» 19:00.- Լուրեր 20:00.- Սարաֆիար 20:30.- Մարգարէն յայտագիր 22:00.- Ալմասիէ 23:00.- Թահիթք ալ Էնու 23:00.- Մարգարէն լուրեր 23:30.- Սփորթ Կիուլ 00:00.- Լուրեր

ՆՈՒԹ.Վ. 07:30.- Լուրեր 08:00.- Մապահ ի նուարտ 12:00.- «Սահա ուս Սահուի» 13:30.- Եգիպտական ֆիլմաշար 14:00.- Լուրեր 15:00.- Վաւերագրական 16:00.- Մանուկներու յայտագիր 16:30.- Կենդանի գծանկար 18:00.- Մարիամ Նուր 20:30.- Պէթ Սէլըր 21:30.- Ամերիկեան ֆիլմաշար 23:00.- Ամերիկեան ժապաւէն 00:00.- Պէնի Հիլ

Հ1 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՌՈՒՍՏԵՍՈՒԹԻՒՆ 06:00.- Առաջին ծրագիր 08:00.- Օրակարգ 09:00.- Հեռուստաներկայացում. Փանչօ Փանչի «Փարիզեան հրաւեր» 10:45.- Երգում է Սուսաննա Սաֆարեանը 11:00.- Հայուր 11:20.- «Հորովի» 15:00.- Հայուր 15:20.- Հեռուստաներկայ «Լեոնիցին» 15:45.- Առաջին օգնութեան դասընթաց. Ներշնչուող եւ ներծնուող թոյներով «Սիրոյ կախարդանք» 17:00.- Մարգարէն 17:30.- Մարգարէն 18:00.- Մարգարէն 18:50.- Մանուկներ Ստուանծաշունչ 19:00.- Հայուր 19:50.- Հեռուստաներկայացում. Փանչօ Փանչի «Փարիզեան հրաւեր» 20:40.- Երգում է Սուսաննա Սաֆարեանը 22:00.- Հայուր 22:20.- Կէպիզերային ձեպիթաք 23:20.- Հայուր (ռուսերէն) 23:25.- Հայուր (անգլերէն) 23:30.- Այլուր 23:40.- Անցեալը ներկան է 00:10.- Չեռագիր 00:35.- Մանուկներ Ստուանծաշունչ 00:40.- Հեռուստաներկայացում. Փանչօ Փանչի «Փարիզեան հրաւեր» 02:30.- Արծաթէ բանալի-98 03:00.- Հայուր 03:20.- Հեռուստաներկայ «Լեոնիցին» 03:40.- Առաջին օգնութեան դասընթաց. Ներշնչուող եւ ներծնուող թոյներով 04:00.- Մարգարէն Այրիս 04:50.- Մարգարէն 05:20.- Անցեալը ներկան է 05:50.- Այլուր

ԽԱՉԲԱՌ ԹԻԻ 5124 Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՂԱՋԱՐԵԱՆ

1	2	3	4	5	6	7	8	9	10
1									
2									
3									
4									
5									
6									
7									
8									
9									
10									

ԸՈՐԻՋՈՆԱԿԱՆ	ՈՒՂԱՇԱՅԵՍ
1. Սիպիլի թատերական երկը:	1. Քինաթաթոյց - Նախամայր:
2. Յորդոր - Միջնաբերդ:	2. Կրկնուած բաղաձայններ - Լրում:
3. Մեղի, թուամորթ - Շրջուած՝ հակիթ:	3. Ջերմիկ - Կանացի կոչական բառ:
4. Արքունական:	4. Ոտք մը պակաս - Ուղտափուշ:
5. Մեծ հողատէր:	5. Ակուս - Լեզուով մը՝ այր:
6. Ըստ վահրամ Մովսէսի՝ ամէն տեղ կայ - Զիբաբուլ:	6. Քոյապտուղ, մանր հատերով պտուղ:
7. Աստուած:	7. Փոքրացնող մասնիկ - Ուտելիք:
8. Կրկին - Հեթանոսական կրօնաւոր:	8. Նաւախումբ:
9. Լար, առասան - Իրաքեան լրատու գործակալութիւն:	9. Չաղկապ (հակ) - Ցուցական ածական:
10. Մովսէս Յարու - Թիւնեանի գրչանունը - Մանրել, փշրել:	10. Ընձառիւծ - Թոնի-րի խցան:

1 2 3 4 5 6 7 8 9 10

1 Պ Ա Տ Ե Լ Կ Մ Ն Ա  
2 Ա Բ Տ Ա Ե Լ Ս Ո Ր  
3 Տ Ի Ի Ե Տ Ի Ա Ն Ա  
4 Մ Ո Ն Ա Բ Ա Լ Ա Ե Լ  
5 Ա Ս Ո Ր Ի Բ Ա Լ Կ  
6 Հ Ի Ե Տ Ե Ա Կ Գ  
7 Ա Ս Ա Բ Ա Ա Ա Ա  
8 Թ Ա Բ Կ Ե Ս Բ Ի  
9 Բ Ա Բ Ի Բ Օ Ճ Ա Ն  
10 Գ Ա Բ Ի Ե Ն Կ Ի

ԹԻԻ 5123

ԽԱՉԲԱՌԻՆ

ԼՈՒԾՈՒՄԸ

\* Վերոյիշեալ յայտագիրները ենթակայ կրնան ըլլալ որոշ փոփոխութիւններու:

# Մ Ա Ր Ջ Ա Կ Ա Ն - Ա Շ Խ Ա Ր Տ



## ՆՇՄԱՐ

### ՊԱՅՔԱՐՆԱԵՒ ՄԱՐԶԱՇԽԱՐՀԻՆ ՄԷՋ... (ԹԵՆԻՍՄԵՆ ԳԱՒԻԹ ՆԱԼՊԱՆՏԵԱՆԻ ԻՐԱԳՈՐԾՈՒՄԻՆ ԱՌԻԹՈՎ)

Հայկական Յեղասպանության գլխավոր դահիճը, իթթիհատականներու «ուղեղը» Թալիսթր ամենայն սնամասուրեամբ կը յայտարարէր. «Աշխարհի երեսին միայն մէկ հայ պիտի մնայ, այդ ալ թանգարան դրուելու համար»:

Անշուշտ թալիսթրները այդ մէկը պիտի չտեսնէին երբեք, հակառակ իրենց ի գործ դրած բոլոր ջանքերուն: Հայը ոչ միայն չջնջուեցաւ պատմութենէն, այլեւ այսօր իբրեւ անկախ պետականութիւն, իբրեւ պահանջատէր կը մնայ Օսմանեան Կայսրութեան ժառանգորդ ներկայ Թուրքիոյ միակ մղձաւանջը:

Ապրիլ ենք դարձեալ: Կը պատրաստուինք ոգեկոչելու մեր մէկուկէն միլիոն նահատակներուն սրբապան յիշատակը: Եւ ահա Ապրիլ ամսուն, թանգարանին ծառայել մերժող հայուն հարպատ մէկ ժառանգորդը, չորրորդ սերունդի հրաշայի մէկ տղան, Դաւիթ Նալպանտեան անուն, հեռուոր Հարաւային Ամերիկայէն՝ Արժանթինէն կը գոռայ թուրքին երեսն ի վեր. «Կենդանի ենք դեռ»:

Երէկ, թենիսի աշխարհի լայն դոնէն ներս յաղթական մուտք գործեց քանամեայ Դաւիթ Նալպանտեան, արժանանալով *Էյ. Թի. Փի.* իր առաջին տիտղոսին, Էսթորիլի (Փորթուգալ) բաց մրցաշարքի բաժակին: Ան մինչեւ աստիճանական իր ճամբուն վրայ «հնձեց» Խուան Բարլոս Ֆերերոյի եւ Բարլոս Մոյալի նման հսկաներ, միանգամընդմիջտ ապացուցելով իր տաղանդը, գերակայութիւնը, որոնց մասին երկար տտենէ ի վեր կը խօսին մարզաշխարհի ծանօթ մեկնաբանները:

Հաւանաբար այս նշմարը ընթերցողը հարց տայ, թէ ի՞նչ կապ ունին մարզաշխարհը եւ քաղաքականութիւնը, իմա՞ Հայկական Յեղասպանութիւնը, Թուրքիան, եւ այլն:

Ամենայն ինքնավստահութեամբ կը պատասխանենք հետեւեալը.

Երդուած ենք բոլոր մարզերուն ու բոլոր մակարդակներուն վրայ ծաւալել մեր պահանջատիրութիւնը, առիթը չփախցնել հակաթուրք մեր պայքարը դրսեւորելու աշխարհին, հետեւաբար նա՛եւ մարզաշխարհին մէջ: Քաղաքական, մշակութային, տնտեսական, ընկերային, մարզական ոլորտներուն մէջ պիտի հետապնդենք մեր սրբապան դասը, մինչեւ մեր իրաւունքներուն վերատիրացման վերջին կաթիլը:

Դաւիթ Նալպանտեանի իրագործումը սքանչելի է ու հպարտաշիր, պատիւն կը բերէ մեզի՝ հայերու, եւ անոր իրագործումը կը կրկնապատկուի մասնաւոր երբ կը կերտուի Ապրիլ ամսուն ընթացքին:

Ապրիլ՝ քանամեայ Դաւիթ Նալպանտեանը: Էսթորիլը եղաւ անոր մեկնարկը. կը սպասենք այլ բաժակներ եւ անշուշտ կրան շէյնք տիտղոս մը, որուն ոտնամայրը կ'առնենք արդէն:

Հ. Վ.

## ԱՅԼԵԹԻՉՄ

### ԽԱՆՈՒՇԻ ԵՒ ՌԵՏԲԼԻՖ ՀԱՅԵՑԱՆ ԼՈՆՏՈՆԻ ՄԱՐԱԹՈՆԸ

Լոնտոնի 22րդ մարաթոնին, որ տեղի ունեցաւ երէկ՝ Կիրակի, ծնունդով ամերիկացի Խալէտ Խանուշի աշխարհի նոր մրցանիշ մը հաստատեց, երբ 42 քմ. երկարութիւն ունեցող տղոց այս վազքը շահեցաւ, արժանագրելով երկու ժամ հինգ վայրկեան եւ 38 երկվայրկեան արդիւնք մը: Ան այսպիսով բարելաւեց իր իսկ հաստատած մրցանիշը՝ (2 ժամ 05' 42"), որ հաստատուած էր Շիքսլոյի մէջ, 1999ին:

Աղջկանց մարաթոնին տիրացաւ բրիտանացի Փաուլա Ռէտքլիֆ, որ արժանագրեց երկու ժամ 18 վայրկեան եւ 56 երկվայրկեան արդիւնք մը:

28 տարեկան բրիտանացին, որ երկու անգամ կէս մարաթոնի եւ մէկ անգամ ալ աշխարհի քրոս - քաունթրիի ախոյեանութեան մրցումներուն տիրացած էր, յաջողեցաւ շուրջ 4 երկվայրկեանով գերապանցել իր ետին գտնուող երկու ոռու մրցակիցները՝ Սվեթլանա Չախտրաւան (2րդ) եւ Լիուտմիլա Փեթրովան (3րդ):

## ՉՕՐ. ԼԱՀՈՒՏ - Բ. ԱՆԱՆ...

Շարունակուած 2րդ ԷջԸԸ

թեան առաւել վատթարացման: Նախագահ Լահուտ Շարք օր նաեւ ընդունեց վարչապետ Ռաֆիք Հարիրի, որ յայտարարեց, թէ խորհրդակցած են վարչապետին Միացեալ Նահանգներ տալիք այցելութեան եւ անոր ընթացքին ամերիկացի պաշտօնատարներու հետ քաղաքական եւ տնտեսական հարցերու շուրջ ունենալիք խօսակցութիւններուն մասին:

Հարիրի ըսաւ, որ նաեւ քննարկած են ապապետականացումի ծրագիրներն ու անոնց գործադրութիւնը փութացնելու համար անունելիք քայլերը: Նախագահ Լահուտ նաեւ ընդունեց երեսփոխան Պուրթու Հարպն ու Ռայիֆ Մըխայիթը, որոնք գուժեցին երեսփոխան Ալպէր Մուխայիթի մահը:

## ԹԵՆԻՍ

### ԴԱՒԻԹ ՆԱԼՊԱՆՏԵԱՆ ԱՐԺԱՆԱՑԱԻ «ԷՍԹՈՐԻԼ»-Ի ՄՐՑԱՇԱՐՔԻ ՏԻՏԴՈՍԻՆ

Լիզպոնի մէջ (Փորթուգալ) երէկ վերջ գտան թենիսի տղոց եւ աղջկանց «Էսթորիլ»ի բաժակի բաց մրցաշարքերը, արժանի նահալ Դաւիթ Նալպանտեանի եւ սպանացի Մակի Սեռնայի յաղթանակներով:

Նալպանտեան, որ նախապէս միջազգային մրցաշարքի մը ընթացքին հասած էր միայն մինչեւ արտասական հանգրուան (անցեալ Սեպտեմբերին, Փալերմոյի մէջ), մէկ ժամ 44 վայրկեաններու ընթացքին յաջողեցաւ պարտութեան մատնել իր մրցակիցը՝ Եսթրո Նայմիլընը (Ֆինլանտա), արժանագրելով 6-4 եւ 7-6 արդիւնք մը:

Նախքան արտասական մրցումին իր տոմար պահովելը, Նալպանտեան 6-4, 5-7 եւ 6-4 արդիւնքով պարտութեան մատնած էր 3րդ դասուած սպանացի Բարլոս Մոյալը: Նալպանտեան այլ մեծ իրագործում մը կատարուած էր, երբ Բ. հանգրուանին մրցաշարքէն դուրս ձգած



Դաւիթ Նալպանտեան կը տօնէ իր յաղթանակը:

էր թիւ 1 դասուած սպանացի Խուան Բարլոս Ֆերերոն: Աղջկանց արտասական մրցումին, 4րդ մեծ իրագործում մը կատարուած էր, երբ Բ. հանգրուանին մրցաշարքէն դուրս ձգած

գերմանացի Անքա Պառնան, իր կարգին շահեցաւ միջազգային իր առաջին տիտղոսը: 23 տարեկան Սեռնայ իր այս յաղթանակը արժանագրեց մէկ ժամ 12 վայրկեանի ընթացքին:

## ՖՈՐՄԱՒԼԱ 1

### ՄԻՔԱՅԷԼ ՇՈՒՄԱԽԸՐ ՇԱՀԵՑԱԻ ԻՍՈՂԱՅԻ ԿՐԱՆ ՓՐԻՆ

Ֆեռարիի գերմանացի վարորդ Միքայէլ Շումախըրը, շահեցաւ այս եղանակի Ֆորմուլա 1 աշխարհի ախոյեանութեան իր երրորդ տիտղոսը, երբ երէկ շահեցաւ Ման Մարիոյի (Իմոլա) կրան փրին, արժանագրելով մէկ ժամ 29 վայրկեան եւ 10 երկվայրկեան արդիւնք մը:

62 լիթ (305,5 քմ.) ունեցող այս կրան փրին ընթացքին Ֆեռարի յաջողեցաւ տուալի մը իրագործել, որովհետեւ Շումախըրի խմբակից պրայմիցի Ռուպէն Պարիքելլօ հանդիսացաւ երկրորդ: Այսպիսով, ան յաջողեցաւ եղանակի իր առաջին վեց կէտերը հաւաքել եւ մեծապէս նպաստել իր խումբին, որ խմբային ընդհանուր դասաւորման մէջ գրաւեց պարագրիտի դիրքը, երբեք կէտի առաւելութիւն մը ունենալով Ուիլիքմի վրայ, որուն երկու վարորդները՝ Ռայիֆ Շումախըրը (Գերմանիա) եւ Խուան Փալլօ Մոնթոյա (Քոլումբիա) յաջողեցան միայն եօթ կէտ հաւաքել, յաջորդաբար գրաւելով 3րդ (4 կէտ) եւ 4րդ (3 կէտ) դիրքերը: Ֆեռարիի վարորդները հաւաքեցին 16 կէտ:

Միքայէլ Շումախըրը, որ Շարք օր տեղի ունեցած փոլ - փոլիշընի մրցումներուն գրաւած էր առաջին դիրքը, արժանագրելով մէկ վայրկեան 21'' 091 արդիւնք մը, կրան փրին սկիզբէն մինչեւ արտար մնաց առաջին դիրքին վրայ, անշուշտ եթէ նկատուի անունը իր կատարած երկու փիթ - սթափները, որոնց ընթացքին իր խմբակիցը՝ Պարիքելլօ յաջողեցաւ գերապանցել չորս անգամ աշխարհի ախոյեան հանդիսացած գերմանացի:

Այսպիսով, Շումախըրը, Պարիքելլոյի հետ յաջողեցաւ տուալի մը իրագործել, սնցեալ տարի տեղի ունեցած Հունգարիայի մրցումին, որտեղ իր կարգին շահեցաւ միջազգային իր առաջին տիտղոսը: 23 տարեկան Սեռնայ իր այս յաղթանակը արժանագրեց մէկ ժամ 12 վայրկեանի ընթացքին:



Միքայէլ Շումախըրը, որ շահեցաւ Իմոլայի կրան փրին

րիոյ կրան փրին էտը, որուն ընթացքին էր, որ Շումախըրը չորրորդ անգամ ըլլալով շահած էր տիտղոսը:

Տարբ. վարորդներ կրան փրին կիսատ ձգեցին, երբ ինքնաշարժի խանգարում ունեցաւ: Նշենք, թէ այս կրան փրին ընթացքին ամենէն արագ լիթը արժանագրեց Պարիքելլօ (38րդ լիթին), արժանագրելով 1 վայրկեան 27'' 170 արդիւնք մը:

Ստորեւ՝ երկուսնալրան փրին արդիւնքները. 1.- Միքայէլ Շումախըրը (Գերմանիա) Ֆեռարի 1 ժամ 29' 10'' 2.- Ռուպէն Պարիքելլօ (Պրայմի) Ֆեռարի 1 ժամ 29' 28'' 3.- Ռայիֆ Շումախըրը (Գերմանիա) Ռիլիքմ 1 ժամ 29' 30'' 4.- Խուան Փալլօ Մոնթոյա (Քոլումբիա) Ռիլիքմ 1 ժամ 29' 55''

- 5.- Ենսըն Պարթն (Բրիտանիա) Ռեքսո 1 ժամ 30' 34''
- 6.- Տէյլիտ Քուլթարտ (Բրիտանիա) Մաքլարըն 1 լիթ ուշ (Քանադա) ՊՄՐ 1 լիթ ուշ
- 7.- Ֆրանչիսկո Գոնչալես (Ֆրանսիա) ՊՄՐ 1 լիթ ուշ
- 8.- Ֆիլիպէ Մասսա (Պրայմի) Սաուպըր 1 լիթ ուշ
- 9.- Ետնոս Թրոյի (Իտալիա) Ռեքսո 1 լիթ ուշ
- 10.- Նիք Հիտֆէլտ (Գերմանիա) Սաուպըր 1 լիթ ուշ
- 11.- Մարք Ռեպըր (Աստրալիա) Միխարտի 2 լիթ ուշ

## ՊԱՔԵԹՊՈԼ

### ՓԻՆԿ ՓՈՆԿ. ԼԻԲԱՆԱՆԻ ԽՄԲԱՅԻՆ ԱՌՈՅԵԱՆՈՒԹԻՆ

### Հ. Մ. Ը. Մ.Ի ԿԱԶՄԵՐԸ ՅԱՂՈԱՆԱԿՈՎ ՍԿԱՍՆ ՄՐՑԱՇԱՐՔԸ

Լիբանանի փինկ փոնկի խմբային ախոյեանութեան մրցումներուն, որոնք սկսան անցեալ Շարք օր Միշէլ Մըրի անուն համալիրին մէջ (Նահիլ Մոթ), Հ. Մ. Ը. Մ.ի տղոց եւ աղջկանց կապները յաղթանակով սկսան մրցաշարքը: Աղջկանց մրցումներուն, Հ. Մ. Ը. Մ. 3-0 արդիւնքով պարտութեան մատնեց իր մրցակիցը՝ Ռիսալէ Քէֆ Ռըմմէնը:

Տղոց պարագային, Հ. Մ. Ը. Մ., որ կատարեց երկու մրցում, յաջորդաբար պարտութեան մատնեց Ռիսալի Պասպտան եւ Մոն Լա Սալը, երկուքն ալ 3-0 արդիւնքով:

Հ. Մ. Ը. Մ.ի տղաքը այսօր ժամը 5:30ին կը ճակատին Ալի Սալտի դէմ: Իսկ աղջկանց կապը իր մրցումը կը կատարէ յառաջիկայ Հինգշաբթի օր, նոյն ժամուն, Ատապ Ուալ Ռիսալի (Քաֆարչիմա) դէմ:

## ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈԼԻ ԱՌՈՅԵԱՆՈՒԹԻՆ

### Հ.Մ.Ը.Մ. - ԱՀՏ՝ 0 - 0

Լիբանանի ֆուտբոլի ախոյեանութեան 21րդ հանգրուանի մրցումներուն, Շարք օր Պորձ Համուտի Քաղաքապետարանի դաշտին վրայ, Հ.Մ.Ը.Մ.ի ֆուտբոլի ներկայացուցչական խումբը արժանագրեց եղանակի իր 5րդ հաւասարութիւնը, երբ 0 - 0 արդիւնք մը արժանագրեց Ահտի հետ (10րդ), որ այսպիսով ունեցաւ 23 կէտ: 13րդ եւ նախապէքին դիրքը գրաւող Հ.Մ.Ը.Մ. ունեցաւ 8 կէտ եւ այժմ միայն մէկ կէտով ետ կը մնայ Ալի Սալտայէն:

Անսար բաւական հեռացաւ վտանգաւոր գօտիէն, 3 - 1 արդիւնքով պարտութեան մատնել ետք Հ.Մ.Ը.Մ.:

Նրժմէ - Սաժէս պայքարը տակաւին կը շարունակուի, որովհետեւ երկուքն ալ հաւասարութիւններ արժանագրեցին իրենց մրցակիցներուն հետ:

Ստորեւ՝ 21րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները.

Հ.Մ.Ը.Մ. - Ահտ	0 - 0
Անսար - Հ.Մ.Ը.Մ.	3 - 1
Շ. Սահէլ - Թ. Սուր	0 - 2
Սալամ - Սաժէս	1 - 1
Ահի Սալտա - Պըրժ	0 - 1
Ախա Ալէլ - Նըժմէ	2 - 2
Ռասիկ - Սաֆա	1 - 4

Ստորեւ՝ դասաւորումը, որ ոչ մէկ փոփոխութիւն կրեց.

Խումբ	Մ.	Յ.	Հ.	Պ.	ՆՇ.	ՍՏ.	ԿԷՏ
1.- Նըժմէ	21	15	5	1	51	19	50
2.- Սաժէս	21	15	5	1	44	25	50
3.- Թ. Սուր	21	13	7	1	43	14	46
4.- Սահէլ	21	12	4	5	35	22	40
5.- Սաֆա	21	12	3	6	42	28	39
6.- Սալամ	21	9	4	8	31	25	31
7.- Պըրժ	21	9	4	8	35	33	31
8.- Ախա	21	8	4	9	24	29	28
9.- Անսար	21	7	6	8	26	26	27
10.- Ահտ	21	5	8	8	27	32	23
11.- Հ.Մ.Ը.Մ.	21	5	4	12	27	39	19
12.- Սալտա	21	2	3	16	47	48	9
13.- Հ.Մ.Ը.Մ.	21	1	5	15	17	40	8
14.- Ռասիկ	21	-	6	15	12	52	6

## ՍԱԺԵՍ - ՌԻԱՏԻ՝ 1-0

Լիբանանի պաքեթպոլի տղոց արտասական առաջին մրցումին, որ տեղի ունեցաւ անցեալ Շարք օր, Սաժէս արժանագրեց իր առաջին յաղթանակը 100-86 արդիւնքով պարտութեան մատնելով Ռիսալին, հակառակ անոր, որ հիւր կապը՝ Ռիսալի, Ա. կիսախաղին 48-42 արդիւնքով յաղթանակեց իր:

Երկրորդ ճակատումը տեղի կ'ունենայ այսօր՝ Երկուշաբթի, Ռիսալիի դաշտին վրայ ժամը 20:45ին:

## ՄԻՆԱԿՈՎԻՆ ՄՕՏ ...

Շարունակուած 3րդ ԷջԸԸ

Կածը հաստատող որեւէ փաստ չէ յայտնաբերուած:

Կառավարութիւնը կը հակադարձէր Գերմանիոյ ներքին գործոց նախարար Օթօ Շիլիի այն յայտարարութեան, ըստ որուն կապատար բեռնակառքին պայթումը արկածի մը արդիւնք չէր, այլ՝ խափանարարական ահաբեկչական արարք մը:

Պայթումը տեղի ունեցած է Հինգշաբթի օր, ձերպա կղզիին վրայ, սինակոկի մը մօտ: Պայթումը խլեց 17 քուրեք, որոնց տասնմէկը գերմանացի է, հինգը՝ թունուպի է ֆրանսացի մը: Չուրեք մեծ մասամբ գերմանացիներ են, որովհետեւ գերմանացի վթօսաշրջիկներ փոխադրող օրոպիլու մը պայթած բեռնակառքէն քանի մը մեթր անդին կանգ առած էր:

Շիլի ըսած էր, որ Գերմանիա իր կարգին հետաքննութիւններ կը կատարէ եւ ցարդ ստացած բոլոր տեղեկութիւնները ենթադրել կու տայ, որ պայթումը յարձակումի մը արդիւնքն էր:

ՍՏՈՐԵՒԻ ԻՆՔՆԱՇԱՐԾՆԵՐՈՆ ԴԱՍԱՈՐՈՒՄԸ

ԿԷՏ	ԿԷՏ
1.- Ֆեռարի	40
2.- Ռիլիքմ	37
3.- Մաքլարըն	9
4.- Ռեքսո	8
5.- Փակուպը	3
Սաուպըր	3
7.- Միխարտի	2
Թոյթ	2

